

ընկեր ըրած կեանքի հանդիսաւորութեանց
Թերեա, վերջ ի վերջոյ, մեր իսկ մտա-
ծութիւնները, մեր բարի զգացումներն
երաժշտական աղաղակներ են՝ զոր հոգին
միայն կրնայ յղանալ։

Կը հրաւիրեմ զքեզ ուրեմն, ո՛վ ընթեր-
ցող, որ մշակեա երաժշտութիւնն՝ զքեզ
բարուրեցիւ համար, ըու զգայականու-
թիւնդ սրելու, վայելելու վերջնապէս այն
ամենաբազմոյս իմացական զինովութիւնը՝
որ զգայարանքի ու մտքի ամբողջական
յափշտակութիւնն է։ Լսէ՛ երաժշտութիւն,
առանց դեղեկելու՝ բայց մեծ վստահու-
թեամբ՝ նետուէ՛ այդ համարարուն կա-
խարդանաց բազուկներուն մէջ. ան զքեզ
կորստեան չախտի տանի, այլ փարոսի
մը նման պիտի ցուցնէ քեզի նաւահան-
գիւսար ժամանակու ճամբան։

(Շարունակութիւն)

Թրգմ. Հ. Ս. ՏԵՐ-ՄՈՎԱԽՅԱՆ

ԳՐԱԽՕՍԱԿԱՆ

ԱՐՇԱԽԻՐ ՀՕՇԱՊԵՐԵԱՆ (Բարունի). —
Վերադարձեալ և Արշակ Բանաստեղծութիւն-
ներ 1914-1915. Կ. Պոլիս Տպար. Օ. Ար-
զուման 1919։

Ընդամենը՝ հարիւր էջով գրքոյկ մըն
է, որուն մէջ կայ երեսասարդ հոգիի մը
թրթռումները ներշնչուած ու գրուած 15-16
տարեկան հասակին մէջ։ Ա. Հօշապերեան
իր ուսումը կ'առնէ Պօլիս Ս. Լուսաւո-
րիչ վարժարանին մէջ. բայց աշխարհաւոր
և Հայալիւնը ողբերգութեամբ դարոցները
շուտով քցուելով՝ ուսուցիչներ և ուսա-
նողներ ցրուեցան։ Տաղանդը իր մէջ ինք-
նաստեղծ կը թուի. ինքը կեանքի ափին
վրայ գեղեցիկ երազ մը եղաւ, բայց աւաղ
վաղանցուկ և անբոլորչանելի. վաղուց
զգաց իր նորածագ հոգիին մէջ սիրոյ և
ատելութեան հրայրքը կեանքին դէմ, որմէ
վաղուց ալ զրկուեցաւ։

Իր գրքոյկը պնտուած թէ արձակ և թէ
ոտանաւորներէ, իր մահուրէն ետքը ամ-
փոփուած են և գեղեցիկ կերպով դասա-
ւորած. նախ դրուած է «Գրական Սյրքը-
նաորոշիւները» որ կը սկսի քանի մը էջ
արձակ գրութիւններով որոնց կցուած են
նաեւ ոտանաւորներու շարք մը։ Ասոնց
կը յաջորդէ «Մանկական երազները» որ
գրեթէ գրքոյկին երկրորդ մասը կը կազմէ,
մեծ մասամբ մահերգներ են զգացուած
բարեկամի մը կամ սիրելիի մը մահէն։
Իր տողերը հիւսած է հերարձակ մայրե-
րու որդկորոյս լալօնքէն՝ կամ սգազգաց
հօր մը անմխիթար արցունքէն։ Իր հա-
տորիկը գրական անթերի գործ մը չէ, բայց
կը ներփակէ ապագայի մեծ յոյս բանաս-
տեղծի այդ իր 15 տարուան պատանեկան
ներշնչումներուն մէջ։

Պ. Հօշապերեանի սկսնակ թուիչքին մէջ
շատ ակներև են հակումները, ինքը զլիա-
ւորապէս սնած է Դուրեանով, իր հոգին
մեղամազձոտ է. բայց միանգամայն շատ
զգալի են զեռ իր մէջ այն վարպետները՝
որոնց գաղափարները ամբողջապէս իւ-

ՀՈՎ ՄԸ Կ'ԱՆՑՆԻ ՍՐՏԷՍ

✱ ✱

Հով մը կ'անցնի սրտէս, ջերմին, ազազուն,
Հազեւ զգալի։

Կը գզուէ իմ հոգին, սիրով յարաճուն։

Սառ սիրտս հալի։

Հով մը կ'անցնի սրտէս, թեթեւ ու քնքուշ.
Նման գեփուի։

Հոգիս անուրջերով թովէ՝ սիրանուշ,

Ու կուրծքս կ'ուռի։

Հով մը կ'անցնի սրտէս. քամի մը սաստիկ,
Մրրիկ մը ցրտին։

Ձի սահմուկի տակայն հոգիս դեռատի,

Յոյս կայ ջեր սրտին։

Հով մը կ'անցնի սրտէս, զօրեղ փոթորիկ,
Մթին, ամպամած։

Չ'ալեկոծի տակայն հոգիս՝ գերթ ալիք,

Ձի հոն կայ Աստուծո։

Մ. Յ. ՄԱՐԻՅԱՆ

բացուցած չէ: Նոյն իսկ Անմահ Ալիշանի տողերը իր մէջ դեռ ողջ են. «Լուսընկայն Գիրեզմանաց Հայոցը» մեծապէս սատաււած է իր «Պայծառ Գիշերներ»ուն, որուն մէջ բառեր ու տողեր սակաւ փոփոխուած թեամբ ետեւ առաջ դրուած են:

ՀՈՇԱՊԵՐԵԱՆ

Լուսին ահա եւեր է աղամեցեայ կայծերով
Սերաբբուցի մէջ է ծովն սատուածաժող լապտերով
Որ շողողուն ըզթայով կախուած շարժի իմ վերաս
Կայր զԹուրքան տաշնորդ Ասունոյ ծանն Նուրբան:

ԱԼԻՇԱՆ

Այ իմ լուսնակ գեղեցիկ սատուածաժող ցոռ լապտեր
Կայր զԹուրքան աչք անփակ սըրբին այլ զու լայն
[կու տաս
Եր շողողուն ըզթայով կախուած շարժի իմ վերաս
Աղամեցեայ կայծերն սըրբան զասողեբըզ լորս դէ:

Բայց վաղամեծիկ բանաստեղծը գողտրիկ և ինքնաստեղծ պատկերներն ունի «Պայծառ Գիշերներ»ուն մէջ. այնու հանդերձ որ ամէն զրիչ ու բանաստեղծ սկսնակ կամ վարպետ երգած է լուսինը, երգած է աստղիբը, բայց Հօշապերեան կը գտնէ գեղեցիկ նմանութիւն մը երկնքի հաստիկ հատիկ մարդ լոյսերուն՝ «Նըման իմ մաւրած ունայն յոյսերին»:

Պ. Արշաւիր շատ զգայուն է զլիսառութեան իր մահերգներուն մէջ. վշտահար Գասպար Էփ. ծօնը իր վաղամեծիկ որդւոյն առթիւ՝ շատ բան կը յայտնէ բարեկամի մը մտերիմ կապերէն, սիրատարփ բացատրութիւններ ունի, գեղակերտ տողեր, ու երբեքն սրամիտ և հոգեբանական գիւտեր մինչ կը տեսնէ բարեկամին դազաղը՝ լացող ամբոխէն շրջապատուած:

Տեսայ դազաղը սեւածիտ, ահալի,
Իմ երէկսան բարեգժմիտ ընկերին.
Սկասարսափ լեզուն էր ան ունայնի
Զոր ազօթըզ կարծես մեղմել կ'ազգէին:

Շուրջն խորատուր կ'ունկերդէրէն լաւախան,
Տունն Ասունոյ գերեզմանի մէջ կու տար
Տաք սըրտերու համար՝ յոր ստա սե՛հ վազառա
Գուցէ շատ մարդ Եւնի համար հոն կու լար:

Ոչ նուազ գեղեցկութեամբ օծտուած և միանգամայն պատկերալից են իր միւս կտորները ինչպէս «Պահանջը», «Կը ժուպտէր», «Շարքէին արցունքը», «Երազիս մէջ» են, են:

«Մանկական Երազներ» ը կազմող ոտաւանորները երիտասարդ Թիշերն են. ասոնց մէջ աւելի աչքի կը զարնեն «Գիւղին համբոյրը» և «Հոգեարքի մը իղձը». Թէպէտ ասոնց ալ զուրկ չեն այն պակասաւոր վարդապետական ու գրեթէ դպրոցականի թեթև ոճէն, բայց ունի հոգատար պատկերներ, ոճի յղկում, բառերու ընտրութիւն և ցաւազար ու սիրատարփ զգացուածով օրօրուող հոգի մը՝ որ անպայման Գուրեան մը կուտանք կու տան, Գիւղին համբոյրին չուրիւնը այս է:

Բայց միանգամայն անպակաս են սըրտահեշտ պատկերներն ու այն միշտաւանջը՝ զոր կ'ունենայ մարդ աշնանային մայրաւ մուտի մը երկինաւորութիւն հանդէպ...

Առանձն եւ կը սիրեմ, գործազուրկ ըլլալ մ'է ան
Որ կու զայ սիրաւ համարել զով շրթներով իր դիման,
Իր չեզոքաւ անխորհրդ օրօրները կը զգուեն
Զըմեռ սմառ հասարար իմ հոգւոյ մէջ դեռ անգէն...

Եւ աւելի վար, թարմ է այն պատկերը որ տարբերուն ձանձրոյթը կ'արտայայտէ սահուն և կրակոտ ոճով:

Առանձն եւ սիրեցի...

.... զաշ շարունակ մէջ իր թոց

Կապած շրթերս զրկեցին ճըտաւ շրթեր նորաբաց,
Համբոյրը զոր հուշայց նոր, ո՛ր Արեւն էր որ ունի
Լոյսը՝ Եղեմ, հուրէ՛ն՝ գեղեն, զածա՛ն զաղափրք կանգի...
Եւ սիրեցի դարաւոր Համբոյրը սիրաւէզ
Հիւսիսաւոր սիրուհոյն ծոռն իր սէրը արտասուեց...
Ովկէաների նախաձեռն կանաչ կանաչ ունայնի
Մերթնիւզ շար երկնքին. ըսին. — Քու սէրդ է շատ հին...

«Հոգեարքի մը իղձը» կը ներփակէ վաղամեծիկ բանաստեղծին ունեցած բովանդակ զանազանութիւնը կեանքին դէմ. իր ձկտուած մը յոռեան և, տեղ տեղ ունի զգացումի խտութիւն, բայց ինչ որ կը ջլատէ այս գեղեցիկ ոտանաւորին ամբողջութիւնը, քիչ մը թեթև և աննշան գաղափարներու կը:

ցումն է: Նիւթը հայաջինջ ողբերգութեան նկարագիրն է. Հօշապերեան կը բողբոջէ երբեմն բնութեան դէմ ալ՝ երբ կը պատկերէ իր առջև հայ մայրերու, որբերու տեղահանումը, անլուր տառապանքները, հայ տան ոչընչացումը: «Հոգևարթի մը իղձը», մասնակի՝ շատ յաջողած է իրապաշտ կերպով ներկայացնել այն արցունքն ու արիւնը որ զակի մը զանկէն մօրը բերնին մէջ կը հոսի, կամ յուսահատ մօր անդունդն ի վար նետուածը:

Անդին, անդին կը կապեն... զանկերն երկու կը շարունակեն, Տապաստ դիրն տակ հօրեան օղակն անշունչ կը մընայ... Գետեր կարմիր կը վազեն... ծարաւամեռ են թափած Մարգիկ յիմար. Լըրի տեղ արիւն՝ արիւն է իրմէն... Մովսէսիկ թէլ անդին մօրը դիակը բզբջատած Անորժակով կը լափէ մանուկն յիմար իր քաղցէն:

Պ. Հօշապերեան իր Թարմ պատանեկուքեան՝ զգայնիկ խորհող մըն է, իր հասարակը թէպէտ զգայի է թէ սկանակի մըն է, և զուրկ չէ զրական թերութիւններէ այնուհանդերձ ենթադրել կու տայ միանգամայն ապագայ բանաստեղծը՝ որ իր որոշ դիրքը և նկարագրիւր պիտի ունենար: Իր արձակն ալ հմայիչ ոճ մ'ունի, և իր արուեստը սկսած է արդէն ուղղութիւն մը առնել. բառամթերքը ընտիր է, դիւրասահ, լեզուական ազնիւ դարձուածնեւրով և բարձր զարգացարի հիւսուածքով:

ԱՀԱՌՈՐ ԳԻՇԵՐԸ: «Բայց ահա գիշերը կը մերձենայ, յամրաքայլ, վճռական, սառնադէմ, իր ժպիտին մէջ արցունք կայ, ու արցունքին մէջ ծիծաղ: Ո՛հ, խորհրդալուր են ու յղի՝ գիշերները լռին, անոնց ծնունդը երկուսեան է, կեանք ու մահ: Էան գիշերներ որ առաւօտ ու արեւ ունին, կեանքի գիշերներն են անոնք: Գիշերներ ալ կան սե ու աղջամղջին գիշերներ, ահ անոնք անլոյս և անյոյս գիշերներն են գեթեզմանին, անառաւօտ ու անարեւ, յաւիտենական գիշերները մահուան»:

Այսպէս իր միւս արձակները, Պայծառ Գիշերներ, Հասարակ, Յոյս, Վշտերս են թէպէտ դպրոցական շարադրութեան ձևով

գրուած սակայն ստէպ սրամիտ հոգեբանական խորհրդածութիւններով օժտուած են և ստորև կը դնեմ գեղեցիկ ասացուածները քաղելով իր արձակ գրութիւններէն:

«Արեգակը իր պայծառութենէն ոչինչ կը կորսնցնէ կոյրը գինըը շտանեկուն համար:

Համոզումը և հաւատքը մեզմէ անբաժանելի են:

Ջանանք անհաւատ չըլլալ. բայց մեր հաւատքն ալ ճշմարտին, գեղեցիկն ու բարիին վրայ թող չինէ իր բոյնը:

Յոյսը կեանքի երրորդութեան առաջին սիւնն է:

Հաւատքը մեր կեանքին կեանքն իսկ է, կեանք մը անմեռ ու անվախճան՝ որմէ կը ծնին Յոյսն ու Սէրը. մեր հոգւոյ այն երկու հսկայ թևերը, որոնց վրայ կը թաւալի բարոյական աշխարհը, մին միւսին լրացուցիչն է:

Առանց Յոյսի ոչ Հաւատքը և ոչ Սէրը գոյութեան իրաւունք չունին:

Մարդկութիւնը կը ծնի յոյսով և յոյսով կը մեռնի:

Կեանքը յոյսին մարմնացումն է:

Յոյսը մարդկային բնութեան մէկ անբաժան, անյեղլի մասը կը կազմէ:

Առանց յոյսի կեանքը անապատ մըն է:

Յաղթութեան երգերը ինձ համար ահեւ լի են, և դժուարին է զանոնք ունկնդրել. ես պիտի կարծէի լսել գիշատիչ թռչունի մը կոցնաբարութիւնը որ կը վերադառնայ բոյն մը ոչընչացնելէ վերջ...

Այժմեան պատերազմները ուրիշ բան չեն՝ եթէ ոչ՝ իրաւունքի և արդարութեան

դատին նուիրուած ամենէն անիրաւ ու անարդար միջոցը:

Թ Ա Գ Ո Ւ Հ Ի Ն

ԱՆԱՆԴԱՎԷՊ

Դիւանագէտները շատ ճարպիկ են պատեւրագմները արդարացնելու համար. անոնց ակնոցները ամէն իրողութեանց զատ գոյն կու տան»:

✱

Պ. Արշաւիր Բէպէտ չմեռաւ վրէժի դաշտին վրայ ինչպէս իր տողերուն մէջ կ'արտայայտուէր, բայց դառնաղէտ սպառնալիկան խորին զոհ եղաւ. ինչպէս գեղեցկատեսիլ և յոյսերով լի կոկոն մը կարկտահար: Գրագէտ աստղ մէն էր ան որուն լոյսը կարճատեւ եղաւ. սակայն իր աշխիւ և վշտակիր ծնողքը, որուն խորին ցաւակցութիւնն կ'ուզէր՝ կերպով մը կրկին կեանք տուաւ անոր ապրելու մեր մէջ՝ գեղեցիկ մտածութեամբ մը՝ հրատաւրակելով իրենց սիրազեղ որդւոյն հաստուրիկը՝ որուն տապաքրական ամբողջ ծախքը հոգալով՝ նուիրած են Որբերուն և տարազերեց Ազգ. խնամատարութեան:

Ծնողաց ցաւը անհուն է մէկ հատիկ որդւոյ մը մահուան հանդէպ. և Պ. Արշաւիր երբ վշտահար հօր մը համար կը զբէր անոր վաղամեռիկ որդւոյն առթիւ. կարծես պատկերած է միանգամայն իր Ազնիւ Հօրը մեծաղէտ ցաւը. ան կ'ուզէ ի՜նչ անքննելի խորհուրդին մէջ խորամալ խել:

Ըսէ՛ ինչեւէն հօր վերջւոյն ահաւոր՝ Անդամաւի սև ամպերով կը ծածկեն.
Աչուս սրբախն, Գործած ինչո՞ւ սխալուր
Շանթով մ'անչէջ չընէլ կ'ուզեն զու աշգէտ:

Բայց Տէր և Տիկ. Հօռպաբեհան գեղեցիկ և յաւերժական միտքարանք մ'ունին, քանի որ Արշաւիր կը վերապրի զրագէտներուն մէջ, և որբերուն նպաստելով՝ Հանգիստ իր պատանին ոսկրեղուն, անմահութիւն իր բանաստեղծ հոգիին:

Հ. Ա. ՏԵՐԵՆ

Վանայ կապտաշէպ ծովակի արեւելան ափին կը բարձրանան երկու քնական ապառաժներ. մին բարձր ու մեծ՝ ձգուած Արեւելք Արեւմուտք, միւս շատ փոքր ու նուազ բարձր, յուշարձանի մը գիրքով: Երկուքն ալ անյիշատակ ժամանակներէ ի վեր, իրարմէ հազիւ $\frac{1}{2}$ ժամ հեռաւորութեան վրայ կեցած. անթարթ աչքերով իրարու կը նային, կարծես դարերու իրենց կրածն ու տեսածը իրարու կը պատմեն: Երկու բախտակից, սրտակից դրացիներ են անոնք, իրար ցաւին կարեկից, իրար վշտին գիտակ, իրար փառքին ակնատես: Երկու քոյրեր են անոնք ժամանակակից ու բախտակից, մէկ տեղ են մեծ ցած, մէկ տեղ են փառաւորութեամբ ու մէկ տեղ ալ որբացած: Ասոցմէ առաջինը կը գտնուի Ասորոց վաւառող ու ետաւէր Շամիրամ Թագուհիին շինած ամարանոցին Շամիրամակերտին (Վան) մէջ, իսկ միւսը կէս ժամ հեռու առաջնոյն հիւսիսակողմ՝ Լէզք անտնով գուտ հայաբնակ 400 տունէ բաղկացեալ գիւղի մը մէջ:

Հայ ընտանեկան սրբութեան անաղարտ հոգին պատկերանշանը Արա-Պեղեցիկ Թագաւորի դիւցազնական մահէն վերջ, ասոցմէ առաջին ապառաժին վրայ, երկու օրուայ ընթացքին, իր երկնաբերձ ամարանոց դղեակը կառուցած նստած էր Ասորոց փրկած Թագուհին՝ կրքի ալիքներէն շրթունքները խածնելով. իսկ դէմը քարաժայռի զլիխն բարձրացուցած կառտան մէջ զետեղած էր իր Լէզք անտնով կենդանացնող հոյակաւոր շատուածները, ասոց պատուանդաններու առջև ոսկեայ դագաղի մէջ, բնեզեայ լաթերով պլլուած սպական ձեւ հայոց ողբացեալ Արա-գեղեցիկ Թագաւորը, պառկած էր նա ընտանեկի առաքինի հօր մը լուսապսակով զարդարուած, երանութեան ժպիտը շրթունքին, յաղթական ու վահ: Առական էր նա վաւառող Շամիրամի կարգադրութեամբ, որպէս զի այդ ամենապարզ շատուածները լցեն, կեանք ու կենդանութիւն շնորհեն այն էակին՝ որն հրեշտակային գեղեցկութեամբ օժտուած լինելով մէկտեղ, այսօր արաթոշունի մը նման կը թռչէր իւր ձեռքէն, առանց անոր վարակալարմիք այտերու սիրատուօր համբոյրը վայելելու բախտին արժանանալու: Երկնային մը որ երկրային էր եղած արա դարձեալ երկինք կը փախչէր, արհամարհելով իրեն նման կայսրուհի մը: Ու նա այդ երկինք ուղեւորուած